



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացում ապահովելու` Լիդիան ընկերության պարտավորությունը

«Լիդիան Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունն ու նրա կողմից վերահսկվող դուստր ընկերությունները (այսուհետ` Ընկերություն կամ Լիդիան) պարտավորվում են ապահովել կայուն զարգացում` Ծրագրի զարգացման ու իրագործման բոլոր փուլերի համար սահմանված ընթացակարգերում անդրադառնալով համայնքների, առողջապահության, ապահովության, բնապահպանական ու անվտանգության հարցերին:

Կայուն զարգացման պարտավորության շրջանակներում, Լիդիանի կողմից մշակվել է Անվտանգության քաղաքականություն, որը Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից ռիսկերի կառավարման մոտեցման ու հայեցակարգի անբաժան մասն է հանդիսանում: Անվտանգության քաղաքականությունը սահմանում է Լիդիանի գործառույթները, պարտականություններն ու թափանցիկության ապահովման և պատշաճ կորպորատիվ կառավարման պարտավորությունները:

Լիդիանի Անվտանգության քաղաքականություն

Լիդիանը պարտավորվում է ստեղծել ապահով և անվտանգ միջավայր, որտեղ բոլոր աշխատողները կկարողանան լիովին դրսևորել իրենց ներուժը և որտեղ բացառված կլինեն քրեական գործոններով, ֆիզիկական վտանգով կամ գործունեության հնարավոր դադարեցմամբ պայմանավորված բոլոր տեսակի խոչընդոտները:

Լիդիանը պարտավորվում է ապահովել անվտանգության արդյունավետ միջոցներ` ողջ անձնակազմին ներգրավելով աշխատողների, կապալառուների և այլ շահագրգիռ կողմերի, ինչպես նաև ընկերության ակտիվների, այդ թվում` տեղեկատվության, ապրանքանիշի և համբավի պաշտպանության գործընթացում:

Լիդիանն ընդունում է, որ իր նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ապահովել կազմակերպության անվտանգությունը, ազգային և միջազգային օրենսդրական պահանջների կատարումն ու լավագույն միջազգային փորձի կիրառումը:

Լիդիանը գիտակցում է, որ անվտանգության հարցերում միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանելը նպաստում է նաև տնտեսական գործունեությանը:

Անվտանգության ապահովման իր պարտավորությունը կատարելու նպատակով` Լիդիանը պարտավորվում է.

- Պարզել իր անձնակազմին, ակտիվներին, գործունեությանն ու համբավին սպառնող

ռիսկերը՝ գիտակցելով, որ դրանք կարող են ծագել քաղաքական, տնտեսական կամ սոցիալական գործոններից, ինչպես նաև ձեռնարկել համապատասխան միջոցներ վերոնշյալ ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

- Մշտադիտարկել Ընկերության և իր անձնակազմի անդամների գործողությունները՝ բիզնեսի բոլոր ասպեկտներում անվտանգության ռիսկի դիտարկումն ապահովելու նպատակով:
- Ապահովել ընկերության կողմից տեղական և միջազգային օրենսդրական պահանջների կատարումը բոլոր առումներով: Մա ներառում է նաև ՄՖԿ Կատարողական Ստանդարտ 4-ի (ԿՍ 4) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՁԵԲ) Կատարողական Պահանջների (ԿՊ) կատարմանն ուղղված Ընկերության ռազմավարական պարտավորությունը:
- Հետևել ՄԱԿ-ի Կամավոր Սկզբունքների ուղեցույցներին՝ մարդու իրավունքների պաշտպանության հետ մեկտեղ անվտանգությունն ապահովելու նպատակով:
- Խրախուսել անձնական պատասխանատվությունը՝ օրինախախտ կամ աշխատանքային ռեժիմը չպահպանող անձնակազմի նկատմամբ կիրառելով ուղղիչ և/կամ կարգապահական գործողություններ:
- Համագործակցել տեղական իրավապահ մարմինների հետ՝ մեր ծրագրերի անվտանգության պահանջներին համապատասխանելու նպատակով:
- Ապահովել անվտանգության պատահարների պատշաճ հետաքննություն և ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ դրանց կրկնման հավանականությունը նվազեցնելու նպատակով:
- Ապահովել աշխատողների, ենթակապալառուների կամ ազդակիր համայնքների կողմից բարձրացվող և անվտանգությանը վերաբերող խնդիրների արագ հետաքննություն և լուծում:

Կայուն զարգացմանն ուղղված իր պարտավորությունների շրջանակներում Լիդիանը պարտավորվում է ապահովել համապատասխան ռեսուրսների առկայություն իր գործունեության ողջ ընթացքում, այն է՝ երկրաբանական հետախուզությունից մինչև փակումն ընկած ժամանակահատվածում, իր անվտանգության պարտավորությունները կատարելու նպատակով: Այս պարտավորությունները կարտացոլեն անվտանգության վտանգների մեղմացման նպատակով կիրառվող կառավարման գործընթացի և համապատասխան գործողությունների արդյունքները՝ շեշտը դնելով ռիսկերի կանխարգելման ու վերահսկման համար պատրաստվածության վրա:

3. Համապատասխանության ապահովում

Սույն քաղաքականությունը վերաբերում է Լիդիանի ողջ անձնակազմին, այդ թվում՝ կապալառուներին և Հայաստան այցելող անձանց: Լիդիանի Անվտանգության քաղաքականությունը հաստատվել և ուղղորդվում է Կայունության գծով փոխնախագահի և Տնօրենների խորհրդի կողմից: Լիդիանի անվտանգության բաժինը պարտավոր է ապահովել Անվտանգության քաղաքականությամբ սահմանված ընթացակարգերի և գործողությունների պարտադիր կատարումը: Հակառակ դեպքում դա կարող է դիտարկվել որպես զանցանք: Ընկերությունը պարտավորվում է ապահովել և կատարել ՄՖԿ-ի ու ՎՁԵԲ-ի բոլոր կատարողական չափանիշներն ու պահանջները՝ ապահովելով իրականացվող անվտանգության բոլոր միջոցառումների համապատասխանությունը գործող տեղական և պետական օրենքներին ու պահանջներին:

4. Շարունակական բարելավում

Ընկերությունը պարտավորվում է պարբերաբար վերանայել իր Անվտանգության քաղաքականությունը՝ թարմացնելով այն ըստ անհրաժեշտության: Բացի այդ, ընկերությունը կանոնավոր կերպով կթարմացնի կամ կբարելավի իր Անվտանգության կառավարման համակարգը՝ ապահովելով համակարգված ներքին ստուգումներ և աշխատանքի գնահատումներ, որոնց արդյունքների հիմքով կիրականացվեն ադապտիվ կառավարմամբ ապահովվող շարունակական բարելավման ու կայուն զարգացման գործընթացները:

5. Հաղորդակցություն և իրազեկում

Լիդիանը պարտավորվում է տվյալ Անվտանգության քաղաքականության մասին իրազեկել իր աշխատակիցներին, կապալառուներին և մատակարարներին՝ վերջիններիս պարտականությունների և Ընկերության պարտավորությունների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Անվտանգության քաղաքականության պահանջների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով Ընկերությունը նաև նախատեսում է կազմակերպել հատուկ դասընթացներ իր անձնակազմի համար և համարժեք քայլեր է ակնկալում իր կապալառուներից:

Սույն քաղաքականությունը հաստատվել է Տնօրենների խորհրդի կողմից 2018թ. օգոստոսի 14-ին: